

ՀԱՅՀ ԿԵՆՏՐՈՆԵԿԱՆ ԳՈՐԾԵԳԻՔ ԿԱՐԻՑԵ


ԿՈՐՉԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
№ 2 ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ № 2


Դրագին, սովորեցրու անգրագիտին.

Մ. Կ. ՍՄՈՏՐՈՎ

ՎԱՍՅՈՒՐԻՆՍԿԱՅԻ
„ԿՈՐՉԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ“
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲՇԻՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

(Զեռնարկ «ԿՈ.Յ.Ը.» բջիջների համար)





ՀԱՅՀ ԿԵՆՏՐՈՆԵԿԵՆ ԴՐԹՎԴԻՄ ԿՈՐԻՑԵ

«ԿՈՐՉԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԹՅԴ

Դրագես, սովորեցու անգրագետին.

3ԿՈՏ:37

A T
3906



Ա. Կ. ՄՄՈՏՐՈՒ

ՎԱՍՅՈՒՐԻՆՍԿԱՅԻ

„ԿՈՐՉԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ“

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԲԺԻՇԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ



ՏԵՐԵՊ. Ա. 6

1929 թ.

ՊԵՏՏՐԱՍԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Պատու. № 424

Գրառ. № 2011(բ) — Տիրաժ 3,000

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Յերկրում սոցիալիզմի շինարարության, աշխատավոր լայն մասսաներին այդ շինարարության մեջ ներդրագելու գործում մեր կուսակցության ու խորհրդակին իշխանության կատարած աշխատանքը համառորեն պահանջում է զբաղետություն տարածել մեծահասակ բանվարների ու զլուզացիների միջև։

Դեսես բավական մեծ տոկոս է կազմում անզրադիտությունը, մեզ ձու մեծահասակների մոտավորապես 75—80 տոկոսն անզրագետ է, իսկ այս հանգամանքն ամենամեծ խոչընդուներից մեկը պետք է համարել մեր իրերի վերակառուցման, սոցիալիստական շինարարության գործում, վորովհետեւ «Բանի յերկրում մենք դեռևս ունենք այնպիսի մի յերեվույր, վորապիսին անգրագիտուրյունն է, բաղաբական լուսավորուրյան մասին խոսելի բավական դժվար է... Անգրագետարդը դուրս է բաղաբականուրյունից...» (Անին):

Իհարկե, չպետք է ժխտել այն զգալի աշխատանքը, վոր կատարվել է անզրագիտության վերացման բնագավառում, բայց միաժամանակ չպետք է մոռանալ նաև այն, վոր կատարված աշխատանքն անհամեմատ քիչ է այդ բնագավառում զոյություն ունեցող հսկաբական պահանջի հանդեպ։

Դժվար է ամբողջ աշխատանքը կատարել մի՛ միայն պետության միջոցներով, քանի վոր նրան յութական սուր պալմանները հնարավորություն չեն

տալիս բոլոր անգրագետներին տեղավորելու պետական միջոցներով բացված լիկիայաններում ու կիսագրագետների խմբակներում։ Ուստի այս մեծ գործին ոգնության են գալու հասարակական կազմակերպությունները, հասարակության բարյացտիամ վերաբերմունքը դեպի այս աշխատանքը։ Ինչ խօսք, վոր ծանրության կենտրոնն այս խնդրում հանդիսանալու յև «Կորչի անգրագիտությունը» ընկերությունը։

Վերջերս կազմակերպած կուլտարշավանքն ըդգալիորեն աշխատություն մտցրեց այս բնագավառում։ Բացվեցին նորանոր լիկիայաններ ու կիսագրագետների խմբակներ, անգրին թվով անգրագետներ տեղավորվեցին սրանցում։

Սա, անկասկած, մեծ հաղթանակ եւ:

Համապատասխան ձեռնարկի բացակայությունը գլխավոր խոչընդուներից մեկն եր հանդիսանում մեր աշխատանքների ընթացքում, վորի հետևանքով կԱնը բջիջները մեծ դժվարությունների առաջ ելին կանգնում և դանդաղեցնում գործը։

Հրատարակելով վորպես ձեռնարկ «Վասլուրինսկայա բջիջի աշխատանքը» զրքույկի հակերեն թարդմանությունը՝ «Կորչի անգր.» ընկերությունը դրանով զգալիորեն թեթևացնում է սահեղձված բացը և կԱնը բջիջներին հնարավորություն տալիս անցնելու նորմալ աշխատանքի։ Մատնանշված բջիջի աշխատանքներն ամենալավ ուղեցուցը և որինակը կարող են լինել մեզ համար։

ԿԱՆԸ բջիջներ, հետևեցեք Վասլուրինսկայա բջիջի որինակին, աշխատանքը ձեր աշխատանքները և ըս-

լոր ուժերով պարագարի յելեք սոցիալիզմի շինարարության մեծ գործին խոչընդուն հանդիսացող անզրագիտության դեմ:

«Կորչի Անգրագիտությունը» ընկերության
Կենսունական խորհուրդ

«Կորչի անզրագիտությունը» ընկերության յուրաքանչյուր անդառ մեծ հետաքրքրությամբ կկարդա ընկ. Սմուրառի այս գրքույկը: Ցեվ վոչ միայն ԿԱՆՀ անզրամը, այլ և խորհուրդների յերկրի կուլտուրական աճման մասին հող տանող լուրաքանչյուր աշխատավոր:

Գրքույկում վոչ միայն մեր պարզեատրված ըըջիջի^{*)} աշխատանքների կոնկրետ կենդանի փորձն և, վորին պետք և հետեւ ամբողջ մեր ԿԱՆՀ կաղմակերպությունը, միայն դրանով չե, վոր գնահատելի յետյդ գրքույկը: Նա խփում և բոլոր «որյեկտիվ պատճառներին», վորոնց վրա այնպես հաճախ են հիմնվում, յերբ չկա կենդանի աշխատանք, յերբ ԿԱՆՀ անունով կա, բայց իրապես գոյություն չունի, չնայած այն հանգամանքին, վոր չորս կողմն անզրագիտության և անկուլտուրականության անսահման ծով և Որեցոր, հավիտակված աշխատելով, մեծ ուժ տալով ԿԱՆՀ դործին, կտառեցելով իր աշխատանքները լայն հասարակական հիմքերի վրա, վասյուրինսկայա բջիջը հաղ-

^{*)} ԿԱՆՀ Պատյուրինսկայա բջիջը (Կըասնովարի շրջանի, Կուրանի ոկրուգի) ստացել և տատջին մրցանակը (կինո ապարագան) 1927 թ. ԿԱՆՀ բջիջների համառուսական մրցության ժամանակի

թահարում և իր ճանապարհի վրա գտնվող բոլոր խո-
չընդուները: Նա պայքարում և հասարակական ան-
տարբերության, կուլակության, ժողովրդի մթության
դեմ: Նա հաղթող հանդիսացավ: Նա դարձավ իր շըր-
ջանի կուլտուրական կենտրոնը և դաստիարակեց մեծ
թվով ակտիվ գործնական հասարակական աշխատանք-
ների համար: ԿԱՆԸ Վասլուրինսկայա ըջիչն առա-
ջիններից մեկն եր, վոր բարձրացրեց կուլտուրական
հեղափոխության դրոշակը և դրանով ամրապնդեց իր
շրջանի սոցիալիստական շինարարության գործը:

Ընկերներ, «Կորչի անգրագիտությունը» ընկե-
րության անդամներ, կարդանք ունորից կարդանք այս
գրքումկը, վորը հասարակական պասսիվության և նրա
«որյեկտիվ պայմանների» վրա հիմնված արդարացում-
ների դեմ պայքարելու ամենալավ միջոցն եւ:

Այն, ինչ վսր արել են վասլուրինցի ընկերները,
կարող եւ և ակտոք եւ անի ԿԱՆԸ լուրաքանչյուր ըը-
ջիջ:

Մ. Եպօնելին

I. ՎԱՍՅՈՒՐԻՆՍԿԱՅԱ ՍՏԱՆԻՑԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Վասյուրինսկայա ստանիցան ընկած է Կուրան գետի աջ ափին։ Ամառը նա թաղվում է դյուզական այգիների կանաչի մեջ, իսկ ձմեռը, բացի միքանի շաբաթներից, կալչող ցեխի, վորից վոաքդ մեծ դժվարությամբ կարող ես հանել։ Ունի 12,000 բնակչություն։ Կեսը կազակներ են, մյուս կեսը՝ չեկվորներ (ուրիշ նահանգներից)։

Ստանիցան իր տնտեսական և սոցիալ-կուլտուրական զբությամբ առաջներում վոչնչով չեր տարբերվում կուբանի մյուս ստանիցաներից։ Ներկայումս նա զգալիորեն առաջ է գնացել։ Շնորհիվ լավ աշխատող կոռպերացիայի՝ կտուցված է արտեզյան ջրհոր, ելեկտրիֆիկացիայի յեն յենթարկված հասարակական հիմնարկությունները, կենտրոնական փողոցները և դյուզական տների մի մասը։ Ունեն մշտական կինո, խրճիթ-ընթերցարան և նախկին խանութից վերակառուցված թատրոն։ Կառուցվում է շրջանային նշանակություն ունեցող հիվանդանոց։ Ունի գյուղատնտեսական և անասնաբուժական

կալաններ և գավառալին հիվանդանոց՝ վեներական բաժնով:

1923 թ. ստանիցայում անզրագիտությունը վերացնելու 1300 հասակավոր անզրագետներ կային: Ներկայումս յերեխաները լրիվ չափով են ընդգրկված: Բնակչությունը պարապում ե բացառապես գլուղատնտեսությամբ: Տնայնագործական արդյունաբերություն չկա:

2. ԲԶԻՉԻ ԱՌԱՋ ԳԱՎՈՒ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մի շարք ընկերներ, վորոնք հետագայում դարձան բջիջի կազմակերպիչները և մինչ այժմս ել ակտիվ կերպով աշխատում են ինչպես կԱնը, գծով, նույնպես և լուսավորության ֆրոնտում, դեռ մինչ Վասլուրինսկ գալն աշխատել են անդրագիտության վերացման և այլ կուլտուր-կրթական աշխատանքներում կարմիր բանակում և այլ տեղերում:

1923 թ. ստանիցայում (կազակների գյուղ), ռազմական կոմիսսարիատի կարգադրությամբ, գործկոմի կողմից բացվեց լիկլայան անզրագետ նախագինակոչիկների համար: Խճարկե, գործը գլուխ չեկավ առանց այդ ընկերների ակտիվ մասնակցության: Շուտով լիկլայանում յերեան յեկան նաև կանայք—կարմիր-բանակալինների այ-

ըլիներ և բատրակուհիներ։ Իմկեայանի շուրջն ըսկըսեց կազմվել ակտիվ կորիզ, և խոսակցություններ ելին լինում ավելի լայն, բայց վոչ բոլորովին վարոշված աշխատանքների մասնաւությունը կազմակերպված է աշխատանքների մասնաւությունը։

Բարեգախտաբար փոքր ժամանակից հետո կենտրոնական լրագրութ, կարծեած «Բեդնատայում», լույս տեսավ Մ. Ի. Կալինինի նամակը անդրագիտության վերացմանը աջակցող ընկերությունն կազմակերպելու մասին։ Մեր ակտիվիստներին միայն սա յեր պակասում։ Առանց ուշացնելու 1924 թ. մարտի 25-ին նրանք հավաքվեցին և կազմեցին ԿԱՆԸ բջիջի ժամանակավոր վարչություն։ Վորոշ ժամանակից հետո, հավաքելով միքանի անդամներ, ընկերները հրավիրեցին ընդհանուր ժողով, ընտրեցին ժշտական բանեվարական վարչություն, մշակեցին ժամանակավոր կանոնադրություն և սկսեցին ԿԱՆԸ աշխատանքները։

Այն ժամանակ մոտ Կուբանում գեռ գոյություն չուներ շրջանային ԿԱՆԸ կազմակերպությունն Մենք ստիպված ենքինք գրավոր և կենդանի կապ պահպանել միայն քաղլուսվարի շրջանային տեսչի հետ։ Բացի գրանից, մենք գրագրություն ունեինք քաղլուսպղխարի հետ։

Այնուհետև բացեցինք լիկեայան, 2 կիսապրագեաների դպրոց, 2 անչափահասների դպրոց, մեծահասակ գյուղացիների դասընթացներ։

Որեցոր, տարեցտարի, հաղթահարելով անհավատալի դժվարությունները, մենք մեր բը-
շիջի աշխատանքների համառուսական ստուգա-
տեսի ժամանակ արդեն հաղթահարել եյինք ցա-
րիզմից ստացած անիծած ժառանգությունը—մեր
կազակա-գյուղացիական ստանիցայի մասսայա-
կան անգրագիտությունը:

Յ. ԲՐԵԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Բջիջի կազմակերպման մոմենտին անդամ-
ները շատ քիչ ելին: Այդ պատճառով մեր առա-
ջին գործը յեղավ ուշադրություն դարձնել ան-
դամներ հավաքելու վրա: Դա մենք անում ելինք
այսպես.—պատահում ես ուսուցչի, կոմիերիտա-
կանի, հիմնարկության աշխատակցի, բատրակի.
Խոսքում ես այս կամ այն բանի մասին, իսկ
ինքդ ընտրում ես հարմար մոմենտ, վորպեսզի
ավելի լավ մոռենաս գրագիտության պայքարի
խնդրին: Մոտենում ես ցանկացած թեմայիդ և
ասում ես. «Ահա անգրագիտության վերացման
համար անհրաժեշտ են ուժեր և միջոցներ, բայց
վորատեղից վերցնել դրանք: Արի, դու յել մտիր
մեր մեջ, դու յել, յեթե ժամանակ ունենաս,
կողնես մեզ, իսկ քո անդամավճարները կզնան
տետրերի, մատիտների և այլ ծախըների համար»:

Կժապտա, կլուարատվի, իսկ ուանչալարը նույնիսկ
ծոծրակը կքորի ու կասի. «Ի՞նչ արած, զբիր,
հարկավոր ե ոդնել»:

Մենք անդամներ հավաքեյ ենք և այլ մի-
ջոցներով։ Տեսնում ենք հավաքվում ե գյուղա-
ցիական ժողով, գյուղ. խորհրդի նստաշրջանը
(պլենումը) սպառողակական ընկերության (խազոր-
ների ժողով, կանանց ժողով, իսկույնեթ այս-
տեղ ենք ուղարկում մեր տղաներից միջանի-
սին, իսկ նրանց հետ միասին մի յերկու մեծա-
մորուք ուանչպարներ։ Նստում են նրանք դանա-
դան աեղերում, և մեկը, մյուսը կամ յերրորդը
վիճարաննության ժամանակ տառւմ ե, վոր ան-
հրաժեշտ և անզրազիտությունը վերացնել, ԿԱՆՔ
անդամագրվել։ Լսում են հավաքվածները, քըչ-
փրչում են, խոսում, իսկ մեր ակտիվիտեներն ա-
վելի յեն տաքացնում նրանց։ Շատ լավ եր լի-
նում, յերբ ամբիոն եր բարձրանուած ու նույն
բանի մասին խոսում մեր ուանչպարներից վորեւ
մեկը, վորին բոլորը ճանաչում ելին վորպես մի
մարդու, վոր չի սիրում դատարկ բաներով զբաղ-
վել։ Ալլահիսիներին լսում ելին առանձին ուշա-
դրությամբ։

Այսպես, որըստորեւ, ամսեամիս մենք մաս-
սային բաշում ելինք մեր շարքերը։

Մեծ դժվարություններով ու համառ կեր-

պղով մենք շուտով հավաքեցինք և կազմեցինք
բավականին մեծ բջիջ։ Առաջին լերկու տարվա
արդյունքը յեղավ հետևյալը։

Տարիներ	Ընդդեմ նընդունակություն	Տղամարդկան	Կին	Բանվոր-ներ	Գործություններ	Ծովագործություններ	Սփռություններ	Առաջնադր	Առաջնադր
1924	293	247	46	58	112	84	15	24	
1925	398	329	69	153	91	108	27	19	

Մեր բոլոր անդամները կանոնավոր մուծում
եյին իրենց անդամավճարները։ Շատ ուանչպար-
ներ իրենց անդամավճարները մուծում եյին ցո-
րենով և արեածաղկով (սեմիչկայով)։ Վճարման
ժամանակում եյին տպագրված ստացականներ,
վորոնց գրքույկը վավերացված եր գյուղխորհրդի
կողմից։ Զե՞ վոր գյուղացիները շատ են վախում,
թե հանկարծ իրենց կոպեկն իզուր չկորչի։

Բացի անհատական անդամներից՝ մենք ու-
նելինք նաև իրավական անդամներ։ — տեղական
սպառողական ընկերությունը, արհկազմակեր-
պությունները, տեղկոմիները, գյուղատնտեսական
ընկերությունը, գյուղխորհուրդը և այլ կազմա-
կերպություններ։ Բոլոր այդ իրավական անդամ-
ները վճարում եյին մեզ տարեկան 10 ռուբլուց
մինչև 50 ռ. և ամեն բանում ոգնում եյին մեզ։

Մենք ել նրանց «պարդեատրում» ելինք կարմիր գրքուղիներով՝ ընկ. Լենինի կենսագրությամբ:

Աշխատում ելինք խիստ ծրագրով: Բյուրոն իր նիստերը գումարում եր վորոշ որեր Ամբողջ այդ ժամանակամիջոցում ունեցել ենք 113 նիստ: Բյուրուղի լայնացրած նստաշրջանները — պլենումները կարանում ելին $1\frac{1}{2}$ — 2 ամիսը մի անգամ: Ունեցել ենք ընդամենը 34 նստաշրջան: Անդամների ընդհանուր ժողովները գումարվել ե ընդամենը 24 ընդհանուր ժողով: Ամբողջ այդ ժամանակամիջոցում քննո թյան են առնվել — կազմակերպչական 207, անտեսական-ֆինանսական 264, ազիտացիոն 148 և այլ 34 հարցեր: Հանձնաժողովներն ունեցել են ընդամենը 47 նիստ: Բյուրուղի նիստերին շարունակ ներկա լեն լեղել մեր ակտիվիստները և կոմբջիջի, ԼԿՅԵՄ-ի, գյուղխորհրդի, խրճիթ-ընթերցարանի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները: Յեվ վորովինեան նիստերը մեծ ժամանում ելին խրճիթ-ընթերցարանում — բյուրուղի նիստերին միշտ ներկա ելին լինում նաև քաղաքացիները: Բյուրուղի նիստերում մենք վորոշում ելինք բոլոր մեր ամենորյա աշխատանքների ինդիրները: Այս ակտը մշակվում ելին ծրագրերը և ստուգվում նըրանց կիրառումը: Մեր գործնական ամբողջ աշ-

խատանքներում ծրագրերն իրականացնում ելինք
հետևալ կերպ.—Հավաքվում ե բյուրոն։ Քննու-
թյան ե առնվում, որինակ, նվիրատվություններ
հավաքելու կամ անգրագեսներինցուցակազրելու
խնդիրը։ Մենք սահմանում ենք այդ բանը՝ կա-
տարելու ժամանակը, առանձնացնում ենք ակ-
տիվից անհրաժեշտ քանակությամբ ընկերներ,
հանձնարարում ենք մեկին բանակցել գլուղխոր-
հըրդի հետ, մյուսին—գնալ այս-ինչ թաղամասը
զեկուցում տալու, յերբորդին—հրավիրել նվիրա-
տվություններ հավաքելու համար ժողովրդակա-
նություն վայելող այս-ինչ այն-ինչ ծեր ռանչալար-
ներին, չորրորդին—գտնել ձրի սալեր և այլն։
Այս աշխատանքները վերջացնելուց հետո բյու-
րոյի հաջորդ նիստում մենք ամփոփում ելինք
այդ աշխատանքների արդյունքները, հանում ե-
մինք յեզրակացություններ և նույն ձևով մշակում
ելինք աշխատավորների նոր խնդիրները։ Բոլոր
ընկերներն այդ ծրագրային աշխատանքի ձևին
շատ շուտ ընտելացան, և դա անշափ թեթևացրեց
մեր գործը։

Մեզ մոտ ընդհանուր ժողովներին մասնա-
կցում ելին կանոնավոր։ Իմանալով, վոր ընդհա-
նուր ժողովներին ընդհանրապես լավ չեն հաճա-
խում, մենք, որակարդի մեջ դնելով զեկուցում
բյուրոյի աշխատանքների մասին, կամ մեր բարդ

խնդիրներից մի ուրիշը, այդ մասին փոքրիկ թըղ-թերով հայտարարություն չելինք գոակցնում պա-տերին, այլ կախում ելինք գեղեցիկ աֆիշաներ, վորոնցով հայտարարվում եր, թե ըջիջի ժողո-վից հետո կիմնի ծրի ներկայացում կամ համերգ:

Այդ ներկայացումները մենք կազմակերպում ելինք մեր ակտիվի, լիկայանների և կիսագրա-գետների դպրոցների սովորողների ուժերով:

Այս ճանապարհով մենք քաշում ելինք ժո-ղովներին վոչ միայն անդամներին, այլ նաև ահագին քանակությամբ այլ քաղաքացիներ։ Յեղել են գեղքեր, յերբ մենք ստիպված ենք յեղել ժողո-վի դահլիճը թողնել միայն անդամատոմ սերով և միայն ծեր ռանչպարների մի մասը, մերժելով յե-րիտասարդներին։ Լցնելով դահլիճը, առանց շտա-պելու մենք հաջողությամբ անց ելինք կացնում մեր ժողովի գործնական մասը, իսկ հետո հնա-րավորություն ելինք տալիս ներկա յեղողներին ձրիաբար ներկայացում տեսնել։ Շուտով մեր այդ ժողովներին իրենց ներկայացումներով մեծ ժողո-վը դականություն ձեռք բերին բնակչության մեջ։ Հետագայում մեր վճարովի ներկայացումներն ել մյուսներից ավելի լավ ելին հաճախում։

Մեր բյուրոյի, վերստուգիչ հանձնաժողովի և այլ հանձնաժողովների ընտրողականությունը պահպանվում եր խստիվ կերպով՝ կանոնադրու-

թիան համաձայն։ Անդամներն ակտիվ կերպով
մասնակցում ելին մեր բջիջի ընտրված մարմին-
ների զեկուցումների քննությանը, և վերընտրու-
թյունների ժամանակ դուրս ելին գցվում այս
կամ այն՝ իր վրա դրած հույսերը չարդարացնող
անձինք։ Մեր աշխատանքների ամբողջ ժամանա-
կաշրջանում բջիջը կազմակերպության անդամ-
ներին հաշիվ ե տվել 23 անդամ, կոմբջիջին՝
7 անդամ, գյուղառհրդին՝ 5 անդամ և ընակ-
չությանը՝ 4 անդամ։

4. ԲԶԻՉԻ ԱԳԻՏԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Դժվար եր շարժել կազակ գյուղացիական
մասսան։ Դժվարությամբ նա գնում ե դեպի
լիկայանները։ Ասենք այդ գործը նոր եր։ Մեզ,
անգրագիտության վերացման աշխատողներիս,
լավ հայտնի յե, վոր աշխատանքի ամենադըժ-
վար մոմենտն ե անգրագետներին լիկայան քա-
շելը։ Հարկ յեղավ ամբողջ ուժով զոռ տալ ա-
գիտացիային և համոզելուն, գործելով 2 ուղ-
ղությամբ՝ մասսայական ագիտացիայի և անհա-
տական մշակման ուղղություններով։ Առանձնաց-
րինք մեր ակտիվից ամենահամարձակներին,
վորոնք արդեն դուրս ելին յեկել մասսայի ա-
ռաջ այլ խնդիրներով։ Այստեղ կային և ուսու-
ցիչներ, և կոմիտեիտականներ, և բարձր խմբերի

աշակերտներ, և՝ ժողովրդականությունն վալելող ծերունի ուսնչպարներ։ Մենք ընկերներին պատրաստում ենք յելույթների համար, լուրաքանչյուրին տալիս ենք ԿԱՆԸ ուղեցուց կամ թե սկզբից ինքներս գրում ենք թեղիսների նման մի բան։

16/16
Թե համաքաղաքացիական միտինգներին, թե զյուղխորհրդի նիստին, թե թաղամասերի կամ շրջանային ժողովներում, մեր ընկերներն առեն աեղ ագիտացիա յեն անում ԿԱՆԸ և անդրագիտության վերացման ոգտին և, պետք է ասել, չնչին բացառությամբ, այդ յելույթները տվել են և մեկ-մեկ ուղղակի իրենց վորոշումներով հավատացրել են մեզ, զոր նրանք իսկապես կդան մեզ մոտ, լիկիալաններ կուղարկեն իրենց կանանց, աղջիկներին ու տղաներին։ Ահա մի այդպիսի վորոշում մեր ստանիցայի Յ-րդ շրջանի քաղաքացիներից։

Լոեցին. — Բնկ. Ս. Յուրչենկովի զեկուցումը անդրագիտության վերացման անհրաժեշտության մասին։

Վորոշեցին. — Մենք՝ Վասլուրինսկայա ստանիցայի Յ-րդ շրջանի քաղաքացիներս գտնում ենք անդրագիտության վերացումը ըոլորի համար միանգամայն անհրաժեշտ,

A 3906

վորի համար առաջին հերթին ցանկանում ենք
մեծ հաջողություն՝ իրականացնելու կԱնը
նշած նպատակները՝ նաև խոստանում ենք
կԱնը հասցնել նյութական ոգնություն:

Նախագահ՝ Կիւմենկո, քարտուղար՝ Պրո-
կոֆիյ Գորկուշա:

Վոր դրանք միայն խոսքեր չեն յեղել, կա-
րելի յե հիշել հետեւալ փաստը։ Լավ ազիտացիա
մղելուց հետո այդ շրջանում մեր ակտիվ ան-
դամ Դմիտրի Պրոկուղան այստեղի լիկկայան-
ները քաշեց 100 մարդ։ Մենք ել նրան մի մար-
դաշատ ժողովում նվիրեցինք վարտիքի յեվ վել-
նաշապկի կտոր։

Վոչ մի ներկայացում թատրոնում «լուս»
չեր գնում առանց մեր նախնական յելութի։
10—20 ըուպե նախքան սկսելը դա վոչվոք
չեր համարձակվում խլել մեզնից։ Յեվ վորովինե-
տե թատրոնը հաճախում ե տարրեր հասարա-
կություն, մեր ազիտացիան շարունակ համում
եր բնակչության նորանոր շերտերին։ Մեր գոր-
ծունելության ամբողջ ժամանակամիջոցում թատ-
րոնում ներկայացումներից առաջ մենք տվել
ենք 20 զեկուցում, համաքաղաքացիական ժո-
ղովներում յելութ ենք ունեցել 12 անգամ,
պրոֆորերում — 20 անգամ (մեզ մոտ այդ զե-
կուցումներին դավիս ելին և վոչ պրոֆմիության

անդամները), գլուղխորհրդի նստաշրջաններում—
4 անգամ, կոռովերատիվի փալատերերի ժողով-
ներում 4 անգամ. կազմակերպել ենք 3 ադիտ-
դատ անդրագետների վրա, կազմակերպել ենք,
ադիտացիոն նպատակով, 20 ձրի ներկայացում,
լիկլայաններում սովորողների հետ միասին անց
ենք կացրել 12 մերձեցման յերեկոներ։ Բոլոր
այդ ներկայացումներն ու յերեկոները հաճախել
եւ ռանչպար բնակչությունը։

Մենք նույնպես ոգտագործել ենք կենդանի
լրագիրը և մոգական լապտերը։ Քանի դեռ մենք
կինո չունելինք, շատ բան անում ելինք մոգա-
կան լապտերի միջոցով։

Մեր անկյունը խարճիթ-ընթերցարանում ա-
մենալավ անկյուններից մեկն եր։ ԿԱՆԸ և
անդրագիտության վերացման վերաբերող ամբողջ
դրականությունը, գիտագրամմաները, պլակատ-
ները, նկարները, լիկլայանների սովորողների աշ-
խատանքները, կանոնադրությունը— այս բոլորը
գեղեցիկ կերպով դասավորված եր անկյունում,
ճաշակով կախված եր, դարսված, փակցված։

Անկյունում հերթապահում եյին մեր ակ-
տիվիստները։ Այնտեղ ընդունում ելին անդամ-
ներ, դանձում ելին անդամավճարներ, տալիս
ելին տեղեկանքներ, հավաքում եյին ակտիվ,
լիկլայանի սովորողներին և ավարտողներին տա-

լիս ելին գրականություն մեր ԿԱՆՀ գրադարանից։ Հետագայում, լեռք անզրագիտության վերացման աշխատանքները մեզանում շատ մեծ ծավալ ընդունեցին (մինչև 16 լիկայան ստանդայում), մենք մեր բջիջը, հարմարության տեսակետից, բաժանեցինք կենտրոնականի և 2 ծայրամասայինների։ Այդ ծայրամասային բջիջները դպրոցներին կից ելին, և այնտեղ ևս կային անկյուններ, վորոնցում վոչ միայն պարապում ելին ԿԱՆՀ աշխատանքով, այլև դարձրել ելին կարմիր անկյուններ։ Անհատական և խմբական ագիտացիալի մասին պետք ե ասել, վոր մեզ մոտ դրանով զբաղվում ելին բոլոր ակտիվ անդամները։ Հանդիպում ես մի ռանչպարի կամ նրա կնոջը հիմնարկության մեջ, փողոցում, թե իրենց տան առաջնստած ժամանակ, — անզայման խոսքը դարձնում ես անզրագիտության վերացման և ԿԱՆՀ մասին։

Մենք աշխատանքներն սկսեցինք նախքան մեզ մոտ խրճիթ ընթերցարան բանալը և մասնակցեցինք նրա կազմակերպմանը։ Մեր բջիջի միջոցներից 100 ո. տվեցինք կահ-կար սսիքին, սպիտակացնելուն և պլակատներին։

Յերբ խրճիթ-ընթերցարանն սկսեց աշխատել, մենք այնտեղ բացեցինք տեղեկատու բյուրո։ Մեր ակտիվիստները յերեկոներն այնտեղ

ուանչպարներին տեղեկություններ ելին տալիս և զրում ելին նըանց համար գործնական զրություններ։ Այդ տեղեկատու աշխատանքն անչափ բարձրացրեց մեր հեղինակությունը բնակչության աչքում։ Բարձրածայն ընթերցանությունները նույնպես չելին անցնում առանց մեր ակտիվիստների։ Մենք այստեղ ևս աշխատում ելինք ընտրել հարմար մուենտ ազիտացիայի համար։

Մեր պատի թերթը մենք լուս ենք ընծայել ընդամենք 2 անգամ, բայց համարյա լուրաքանչյուր համարում խրճիթ-ընթերցարանները տեղափորել են իրենց նյութերը։ Մեզ այստեղ հատկացված եր հատուկ անկյուն՝ ԿԱՆՔ և անդրագիտության վերացման։ Մեր բջիջի աշխատանքների մասին մենք զրում ելինք հողվածներ, գիտողություններ նաև մեր շրջանի և մայրաքաղաքի թերթերում։

Մենք բնակչությանը հողաշինարարության ժամանակ վաճառում ելինք հողային որենսգիրք, նաև եժանապին գրուղացիական գրականություն։

Կազմակերպեցինք 2^o սպորտ-խմբակներ և գնեցինք ֆուտբոլի գնդակներ։

Ամբողջ մեր այս կուտ-կրթական աշխատանքները շատ մոտեցրին մեզ զրադարան-ընթերցարանին, իսկ նրա միջոցով մենք պարպում ելինք կադակա-զյուղացիական մասսայի հետ։

Մեր ագիտացիան և մյուս կուլտուր կըթական աշխատանքներն այնքան մոտեցրին մեզ մասսային, վոր մենք, չնալած և մեծ դժվարությամբ, բայց մեր խնդիրներն անգրագիտության վերացման ասպարիզում լուծեցինք համարյա լիովին:

5. ԲԶԻՉԻ ՏՆՏԵՍԱ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱ- ՏԱՆՔՆԵՐԸ

Առանց դրամի աշխատել դժվար է: Այդ մենք լավ ելինք հասկանում մեր աշխատանքի առաջին իսկ որերից: Ճիշտ ե, մեր աշխատանքներն սկսելուց Յ տարի հետո մենք սովորեցինք շատ աշխատանք կատարել հոմարյա առանց գումար ներ ծախսելու, բայց ընդհանուր առմամբ միջոցներ հալթայթելու գործին քիչ ու շադրություն չեր դարձվում: Ահա քջիջում մուտք յեղած միջոցների ընդհանուր թվերը՝

1. Անդամավճարներից 715 ռ. 32 կ.
2. Ներկայացումներից 479 » 28 »
3. Համերգներից և լերեկոներից 189 » 40 »
4. Կամավոր նվիրատվություններ (մթերք 2432 կիլոգր., մաշածը դրամով) 371 » 51 »
5. Իրավական անդամներից 798 » 29 »
6. Նշանների և գրականության գաճառքից 119 » 16 »
7. Այլ աղբյուրներից 508 » 26 »

Ընդհանուր 3181 ռ. 22 կ.

միշտ ե, գումարը սեծ չե, բայց ստանից
ցայում հենց այդ միջոցներից գտնելն ել հեշտ
դորձ չեր: Հարկ եր լինում զանազան կերպով
մոռենալ այդ խնդրին և մշակել ամեն տեսակի
միջոցներ. որինակ, ինչպես ելինք ձեռք բերում
այդ գումարները ներկայացումներից և յերե-
կութիներից: Համաձայնության դալով դրամիշըմ-
բակի ոեժիսսորի հետ, վոր նա ալս-ինչ ժամա-
նակի համար պատրաստի մի պիես, մենք նախո-
րոք պատրաստում եյինք տոմսերը և մեր ակտիվի
միջոցով վաճառում ծանոթների տներում և բո-
լոր բաղաքացիներին:

Յերեմի հարկ եր լինում մուրալ, նպա-
տակը բացատրել, և մեկ ել տեսար՝ հանեց 50 կո-
պեկի: Այսպիսով մեր ներկայացումների և յերեկո-
ների ժամանակ դահլիճը լիքն եր լինում: Ստանի-
ցայի խորհուրդը որկեստրը տալիս եր ձրիաբար:
Ամբողջ սպասարկող կազմը մերն եր ձրիաբար:
Բացի գրիմից ուրիշ վոչ մի ծախս: Ներկայա-
ցումները կազմակերպվում ելին այն որերին,
յերբ բնակչությունն ազատ եր լինում աշխա-
տանքից, իսկ միշտ աշխատում ելինք դնել լավ
պիես և լավ խաղալ: Այդ պատճառով մեր ներ-
կայացումներին հասարակությունը վոչ թե գա-
լիս եր, այ ներս եր խուժում: Նախքան ներ-
կայացումն սկսելը, ըստ մեր սովորության, ողբ-

վում եր կարճ զեկուցում՝ «ինչ ե հարկավոր
մեզ անել անգրագիտության վերացման համար»
թեմայով և շնորհակալություն եր հայտնիում
հասարակությանը ներկայացումը հաճախելու
համար։ Ռեժիսուրին և յերգեցիկ խմբի ղեկա-
վարին հանդիսավոր նիստում մենք հանձնեցինք
կարմիր գրքույկներ ընկ. Լենինի կենսագրու-
թյամբ։

Դրանից հետո այլիս կարիք չեր լինում նը-
րանց խնդրել ներկայացում կամ համերգ կազ-
մակերպելու. նրանք իրենք եյին գալիս մեզ
մոտ և առաջարկում իրենց ծառայությունները։
Խրախուսելը շատ ե աջակցում աշխատանքին, և
մենք դրանից չելինք հրաժարվում մեր գործ-
նական աշխատանքի ընթացքում։

Ահա և մի պատկեր, թե ինչպես եյինք
մենք անցկացնում ստանիցայում նվիրատվու-
թյունների գանձումը։

Աշուն ե... Գյուղացիներն արդեն հավաքել
են հացը... Չորակին ե... Տոն որ ե... փողոց-
ները լեցուն են ժողովրդով... Յուրաքանչյուր
տան մոտ խմբերով նստած են ուանչպարները և
զրուցում են իրենց գործերի մասին։ Ստանի-
ցայի խորհրդի առաջ կանգնած են գյուղացի-
ների սալլերը զույգ յեզներով։ Սալլերում ու-
սուցիչներն են, ծերունի կազակները—մեր ակ-

տիվիստներն են: Բոլորին հրահանդներ են ազը-
գած: Սայլերն ուղղվում են դեպի ստանիցալի
դանագան փողոցները: Խանչպարները և ուսու-
ցիչներն իջնում են սալերից և, դռները փայ-
տով ծեծելով՝ հրավիրում են ուանչպարներին հա-
ցահատիկներով՝ նվիրատվություն կատարել
կԱնը՝ ողաբին: Մերժման դեպքեր համարյա չեն
յեղել. թեկուզ քիչ բայց լուրաքանչլուր ուանչ-
պար ել հացահատիկ եր տալիս: Յերեկոյան հա-
գաքած հացահատիկը մենք տոկոսով հանձնում
եցինք սպառկոռպին: Նրանք, ովքեր հացահատիկ
չունեյին, տալիս ելին ձու, դդում և դրամ:

Այս բոլորը վաճառվում եր շուկալում, իսկ
դրամը մուծվում եր բջիջի զանձարկղը: Ստա-
նիցայում (ավանում) և խուտորներում (գլու-
ղերում) այս շրջագայության ժամանակ մեր
ակտիվիստները պատմում եյին ազգաբնակու-
թյանը կԱնը նպատակների մասին և այն
մասին, թե ինչ բան եանգրագիտության վերա-
ցումը: Խանչպարներից շատերն այստեղ եեթ
անդամագրվում եցին և մուծում իրենց մեկ
տարվա անդամագնարներն սկզբից՝ մթերքով:

Մեր իրավական անդամները մեզ մոտ կար-
ծես թե մի տեսակ պատվագոր անդամներ ելին:
Մենք նրանց առանձին ծանուցագրերով՝ ելինք
հրավիրում մեր նիստերին, ժողովներին, ներ-

կայացումներին, յերեկոներին։ Նրանց անդամավճարները մենք ծախսում ենք նրանց հետ համաձայնեցնելով։

Մենք նրանց հավաքում ենք հետեւյալ կերպ. սպառողական ընկերության լիազորների ժողովում, միության ժողովում; այս կամ այն կազմակերպության վարչության ժողովում մենք դուքս ենք գալիս և անց կացնում նրանց մեզ մոտ իրավական անդամներ լինելու հարցը, նախորոք մշակելով այդպիսիները ղեկավար կուսակցական և խորհրդակին կազմակերպություններում և բանակցելով տվյալ կազմակերպության առանձին անդամների հետ։ Մեր բոլոր իրավական անդամներն ստացել են մեր քջիջից կարգիր դրքուցներ, վորոնք կախված են շրջանակների մեջ՝ ամենաաչքի ընկնող տեղերում։ Կարմիր գրքուցկ ստանալը մեզ մոտ համարվում եր վորպես «պարգև» խոշոր աշխատանքի համար։ Այդպիսիների բաշխումը մենք վոչ թե ի չարն ենք գործադրում, այլ, ընդհակառակը, շատ ժամանենք այդ բանում։

Գործադրում ենք մենք նաև կԱնը կիրակնորյակներ կազմակերպելը, վորը կայանում եր հետեւյալում։ —

Մեր ընկեր. տնտեսավարները գնում ենք ջրաղացների, ձիթհանքների բանվորների մոտ,

պարմանավորվում ելին նրանց հետ, վորպեսզի
նրանք իրենց աղատ որն աշխատեն ձրիաբար,
հատկացնելով իրենց ամբողջ աշխատանքը մեր
բջիջի ոգտին՝ գուրս գալով վառելիքի և լուղի
ծախքերը։ Այդ կիրակնորւակները մեզ բավակա-
նին գումարներ ելին տալիս։ Բանվորներին մենք
նույնպես տալիս ելինք կարևոր գրքույկներ՝
կոլեկտիվորեն։

Դյուզացիական կոպեկանոց գրականությու-
նը մենք վաճառում ելինք այնպես, վոր յուրա-
քանչյուր գնող գրականության արժեքը գը-
ցում եր կնքած տուփի մեջ։ Մեկ կոպեկից պա-
կառ զցել չեր կարելի, իսկ շատ գեղքերում
զցում ելին ավելի։ Իսկ 0,7 կոպեկից ավելին
գնում եր մեր գանձարկղը վորպես յեկամուտ։

Բոլոր խանութներում, խրճիթ-ընթերցա-
րաններում և ստանիցալի խորհրդում նույնպես
մենք ունելինք մեր տուփերը։ Միքանիսում,
բացելու ժամանակ, հավաքված եր լինում մին-
չե 6 ուռւրի։ Տնտեսա-ֆինանսական աշխա-
տանքներ կատարելու համար մենք ունելինք
անտեսա-ֆինանսական հանձնաժողով։

Բացի վերև հիշված միջոցներից մենք կազ-
մակերպում ելինք վիճակախաղ, աճուրդ, վա-
ճառում ելինք պաղպաղակ։ Բոլոր միջոցները
մենք պահում ելինք պետական-խնայողական

դրամարկղի ընթացիկ հաշվում և ծախսում
ելինք խիստ սահմանված կարգով ըստ կարիքի,
բյուջոյի և վերստուգիչ հանձն աժողովի գիտու-
թյամբ։

Ծախսել ենք մենք մեր միջոցները հետե-
վյալ կարիքների համար—

1. Ուսուցիչներին վարձատրություն 2458 ռ. 25 կ.
 2. Թղթի և տնտեսական պիտույքների 329 » 58 »
 3. Բյուրոյի և հանձնաժողովների գը-
րասենյակի 42 » 11 »
 4. Այլ ծախքեր (ճանապարհի և այլն) 164 » 15 »
-

Ընդամենը 2994 ռ. 09 կ.

Մնացորդ 187 » 13 »

Միջոցներ հայթայթելու մեր աշխատանք-
ները չելին սահմանափակվում վերը հիշված ձեռ-
նարկումներով, բայց թվել լրիվ կերպով բո-
լոր միջոցները—անհնարին եւ։

6. ԱԿՏԻՎԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՌԱՋՔԱՇՈՒՄԸ

Ակտիվ անդամ մենք հաշվում ենք նրանց,
ովքեր բացի կանոնավոր անդամակներ մու-
ծելուց և ժողովներին կանոնավոր հաճախե-
լուց, կատարում ենք մի վորհե գործնական։

աշխատանք, որինակ, անդամագրում եյին նոր մարդիկ, աշխատում եյին միջոցներ հայթալթելու ասպարիզում, հավաքում ելին սովորողներ լիկայանների համար, պարապում եյին անգրագեանների հետ, տանում ելին ագիտ-աշխատանք և այլն:

Մի սպասիլ աշխատանք այնտեղ, վորտեղ միայն բյուրոն, իսկ հաճախ միայն բյուրովի քարտուղարն ե վերցնում աշխատանքն իր վրա։ Այս հանգամանքը մենք հասկացանք մեր աշխատանքների առաջին իսկ որից և բացառիկ նշանակություն ելինք տալիս բյուրովի շուրջն ակտիվների կորիզ ստեղծելուն։ Մենք այսպես ելինք վարվում, յեթե ընկերը հետաքրքրվում ե մեր աշխատանքով, խոսում ենք հետը, բացարում, հրավիրում ժամանակցել մեր նիստին կամ ժողովին։ Գալիս ե, լս ւժ, իսկ մենք նրան փորձելու հայար մի թեթև հանձնարարություն ենք տալիս, որինակ, հսկել թատրոնում մեր ներկայացման ժամանակ, աշխատել բուֆետում, գնալ մի վորեե հին ակախվիստի հետ միասին՝ ծանոթանալ լիկայանի աշխատանքներին, գալ ներկա լինել ժողովին, վորտեղ պետք ե զուրս զան մեւ ագիտատորները։ Հետո տալիս ելինք ավելի բարդ հանձնարարություններ, ստուգում ելինք դրանց կատարումը, հանում

ելինք յեղբակացություններ և վորոշում ելինք նոր ակտիվիստների պատրաստականության աստիճանը։ Վորոշելով ընկերների ընդունակությունները՝ մենք նրանց բաժանում ելինք ըստ առանձին տեսակի աշխատանքների—կազմակերպիչներ, ազիտատորներ, տնտեսավարներ, անդրագիտություն վերացնողներ։ Ծեր ուսչպարներն ոգտագործվում ելին ագիտ աշխատանքերում, ստանիցայում նվիրատվություններ գանձելիս, բյուրոյում, վերստուգիչ հանձնաժողովում և լիկվայանների աշխատանքները հետազոտելիս։

Այսպես մեր բջիջն աստիճանաբար աճում եր ակտիվով։ Ահա մեր ակտիվի աճյան թվերը՝ նրա ըստ սոցիալական կազմի ստորաբաժանումով։—

ՏԱՐԻ	ՀԵԿԱԳՈՒՅՔ ՆԵՐԿԱՄԱՐԴԻ	ԲԱՆԱԳՐ ՆԵՐ	ԳՐԱՊԱ ՑԻՒՆԵՐ	ԾԱՂԱՄ- ՀԱՐ	ՍԱՂԱՄ- ՀԱՐ	ԱՆԳԱՄ- ՀԱՐ	ԱՌ
1924	27	6	8	5	8		—
1925	83	15	29	6	27		6
1926	92	13	36	16	21		6
1927	96	11	39	24	10		7

Այսպիսի աճումը և ակտիվ անդամների հարաբերությունը անդամների ընդհանուր կազմին՝

վկալում ե այն մասին, վոր մենք ամենից քիչ
ելինք հետաքրքրվում «կոպեկներով», մեղ պետք
ելին աշխատող մարդիկ, և մենք նրանց գըտ-
նում ելինք:

Աշխատանքի խիստ բաժանումը, յուրա-
քանչյուր ակտիվիստի ընդունակությունների
հաջակառումը և հանձնարարությունների կատար-
ման ստուգումը շուտով սովորեցրին ակտիվին
ընկերական-հասարակական կարգապահության,
վորին իրքի վկալություն կարող ե ծառայել այն
փաստը, վոր չորս տարվա աշխատանքների ժա-
մանակաժիջոցում համարլա վոչվոք դուրս
չմնաց ակտիվից, և բջիջի բյուրոյում վոչ մի
անդամ քննության չի առնվել ակտիվիստների
անկարգապահության խնդիրը։ Մեզ մոտ յու-
րաքանչյուր ակտիվիստ պարծենում ե կԱն՛-
և անդրագիտության վերացման գծով տարած
իր գործնական աշխատանքների ստաժով և կա-
տարած աշխատանքների արդյունքներով։

Նպատակ ունենալով ուժեղացնել ակտի-
վությունը, մենք ակտիվի հետ ունեցած մեր
աշխատանքներում յերբեմն այս կամ այն ըն-
կերոջ աշխատանքները ցույց ելինք տալիս բը-
նակչության, հիշելով նրա տարած ակտիվ աշ-
խատանքը ստանիցալի խորհրդի, խրճիթ-ընթեր-
ցարանի, մեր բջիջի բյուրոյի և այլ կազմակեր-

պությունների զեկուցման ժամանակ։ Գրում
եյինք ակտիվ ընկերների մասին տեղական և
շրջանային թերթերում։ Հանդիսավոր կերպով
նվերներ ելինք տալիս, վորը մեծ ոգուտ եր բե-
րում։ Ակտիվիստ Մ. Ս. Կալայտալին մենք նվեր
տվենք մեկ վոչ թանգ գնանոց պորտֆել։ Նա
Յ տարի առանց փոխարինման աշխատել և աշ-
խատում և մեր բջիջի պատասխանատու-
քարտուղարի պաշտոնով, ամեն տարի վոր-
պես ուսուցիչ պարապել ելիկայաններում
և կիսագրտգետների դպրոցներում, իր կը-
նո՞ց հետ միասին ամրող գիշերներ ե անց կաց-
ըել նա մեր ԿԱՆԸ աշխատանքներում։ Մենք
նվեր տվինք նաև ընկ. Դ. Պրոկուդային, վորը
մեր լիկայանները բերեց մոտ 100 անգրագետ։

Ակտիվ ընկերների համար մենք աշխատում
ելինք ճանապարհ բանալ առաջ գնալու, ըստ
վորում լուրաքանչյուր ալդպիսի առաջքաշման
դեպք մեզ մոտ խիստ հաշվված եր։ Ցեթե մենք
առաջ եյինք քաշում մեր ակտիվիստին, կնշա-
նակի նրա համար մենք և իերաշխավորում ելինք,
լավ գիտնալով՝ ոգտական ե արդյոք և պատ-
րաստված ե առաջքաշման համար։ Կուսակցա-
կան, խորհրդային և հասարակական կազմակեր-
պությունների աջակցությամբ ԿԱՆԸ մեր բջի-
ջի և տարվա աշխատանքների ընթացքում մենք
առաջ ենք քաշել մի շարք ընկերների։

Բոլորը ներկայումս ել ամենալավ ակտի-
վիտաներն են և, չնայած վոր աշխատում են մեր
ստանիցայի սահմաններից հեռու, նրանք մեր
բջիջի հետ սերտ կապ են պահպանում և ող-
նում են իրենց փորձով:

7. ԲՉԻՉԻ ԿԱՊԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ- ՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ամբողջ մեր աշխատանքն ընթացել ե կոմ-
մունիստական բջիջի ընկերական հոգատար ղե-
կավարությամբ: Բոլոր մեր ձեռնարկումները,
ծրագրերը, կամպանիաները և սկզբունքայիննը-
շանակություն ունեցող խնդիրները չեյին իրա-
կանացվում առանց կոմբջիջի բյուրոյում նախ-
նական քննության առնվելու և առանց բյուրոյի
հավանությունն ստանալու: Բյուրոյում մեզ լիա-
կատար հնարավորություն եր տրվում մանրա-
մասնաբար բացատրել և պաշտպանել մեր տե-
սակեանները: Կոմբջիջի քարառողարը համարյա-
շարունակ ներկա յեր լինում մեր բջիջի բյու-
րոյի նիստերին և ընդհանուր ժողովներին: Մեզ
հրավիրում ելին կոմբջիջ զանազան հասարակա-
կան-քաղաքական կամպանիաներ անցկացնելու
հարցերը վորոշելիս, տալիս ելին վորոշ հանձ-
նարարություններ և բավականին խոշոր տեղ
եյին տալիս կամպանիաներ անցկացնելու աշ-
խատանքներում:

Կոմյերիտմիութ, ՀՀը, ստանիցալի խորհուրդը և արհկազմակերպությունները բյուրովի մեջ ընտրված իրենց ներկայացուցիչների կամ ուղղակի կցված ընկերների միջոցով միշտ ել տեղյակ են լեզել մեր աշխատանքներին և ամեն կերպ մեզ ոգնել են։ Որինակ, ստանիցայի խորհուրդը մեր ներկայացուցիչներին հրավիրում ել իրեն նախագահության նիստերին։ Մեր շրջագայության համար մենք միշտ ոգտվում ենքնք ձրի սալլերով։ Խորհրդի նախագահ Սուսիկովը, վորը շատ հետաքրքրվում եր ԿԱՆԼ և անզրագիտության վերացման գործով, շատ մոտ եր կանգնած մեր աշխատանքներին։ Ստանիցայի խորհրդի շտապ աշխատանքների համար մենք տալիս ենք մեր ակտիվը (տուրք հավաքելու, ապահովագրման, վիճակագրության և այլն)։

Կարելի յե առանց չափազանցության ասել, վոր ԿԱՆԼ. մեր բջիջը բոլոր տեղական կազմակերպությունները հաշվի ելին առնում վորապես խոշոր և ոգտակար հասարակական կազմակերպությունն:

Բնակչության հետ մեր ունեցած կապի մասին պետք ե ասել, վոր բացի մեր զեկուցումներից համաքաղաքացիական ժողովներում, ամբողջ մեր աշխատանքներն ընթանում ելին բաց, ընակչության աչքի առաջ և նրա մասնակցու-

թրամք, Մենք բոլորս համարում ելինք, վոր յեթե ազգաքնակության հետ կապը բացակայում է, կնշանակի աշխատանքն ել Ե բացակայում, յեվ ընդհակառակը, յեթե աշխատանքը բացակայում է, հետեւվաքար կարիք ել չկա յեվ ավելորդ Ե ընակչության հետ կապվել։ Այստեղ չե կարող լինել ինչ-վոր ձևական, պաշտոնական ձագ։ Աշխատի՞ր մասսալի հետ—ահա քեզ կապ։

Աշխատելով ստանիցալում՝ մենք կարիք ելինք զգում թարմ ղեկավարության, թարմ մտքերի, չելինք սպասում ալղափիները մեր ընկերության ուղղոնական խորհրդի շըջաբերականներից միայն, մենք ունելինք գրագրություն, խոկ յերբեմն ել կենդանի կապ մեր շըջանային, յերկրային և նույնիսկ կենտրոնական մարմինների հետ։ Մենք այնտեղ ել ելինք ուղարկում նամակներ, պատմելով մեր աշխատանքների մասին և ի պատասխան ստանում եյինք հարկ յեզած ցուցմունքները։ Կենտրոնական մարմինների հետ ունեցած մեր այդ կապը շատ բան տվեց մեզ մեր գործնական աշխատանքների ժամանակ, այդ կազմակերպություններն ել մեզանից պակաս գործնական տեսակետներ չստացան՝ հիմնված տեղական փորձի վրա։

Մեր կրամնողարի ուղոնում առաջինը կազմակերպվեց մեր բջիջը։ Այդ պատճառով մենք,

վորապես ԿԱՆՔ. աշխատանքների պիոներներ, չելինք սահմանափակվում միայն մեր ստանիցալում աշխատելով, այլ ոգնում ելինք ուրիշ ստանիցաներում բջիջներ կազմակերպելուն: Կազմակերպում ելինք բջիջներ նաև փոքրիկ գյուղերում: Այս բջիջների հետ մենք շարունակ կապ ենք պահպանում, իսկ միքանիսին ցուց ենք տվել և ցույց ենք տալիս նյութական աջակցություն:

8. ԲՋԻՋԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՆԳՐԱԳԻ- ՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԻՁՈՒՄ

Դժվար գործ ե անգրագետ հասակավոր բը-
նակչության հաշվառումը: Մենք մեր ակտիվի-
հետ միասին հաշվառումը կատարում ելինք շըր-
ջելով տները, ըստ հնարավորության, հարցա-
քննելով յուրաքանչյուր հասակավորի: Հարցա-
քննելիս կարիք եր լինում մի վորեն բան կար-
դար, գրել տալ նրան: Բավականին լրիվ կեր-
պով հաշվի առնելով հասակավոր բնակչությու-
նը, անգրագետների թիվը պարզելու համար,
մեր ակտիվիստները տեղում բացատրում ելին
անգրագետներին, թե ինչու համար ե դա ար-
գում, և ագիտացիա ելին տանում նրանց մեջ՝
լիկայանում ցուցակագրվելու: Լիկայանների
տեղը և բացման ժամանակը վորոշված եր դեռ

նախքան ցուցակագրումը և այդ մասին հայտընված եր մեր ցուցակագրողներին։ Անգրագետների հաշվառման համար ուղարկվում ելին ավելի դրագետ կոմյերիտականներ, ուսուցիչներ և կընը մըուս անդամները։

Սկզբում լիկացաններում աշխատելու համար պատրաստված ընկերներ չկային։ Մեր քջիջն իրեն միջոցներով մի էրկու հոգի ուղարկեց կրամնողարի շրջանային անգրագիտության վերացման հրահանգիչների դասընթացքները, և յերբ նրանք վերջացրին այդ դասընթացքները, մենք մեր ստանիցալում կազմակերպեցինք անգրագիտությունը վերացնողների միամսյա դասընթացքներ, դասընթացքներն ավարտեցին 20 հոգուց ավելի մեր քջիջի ակտիվիտներից և 5 հոգի Ստարոկուրսինսկայա քջիջի ակտիվից։ Ունենալով պատրաստված աշխատողների — անգրագիտություն վերացնողների կազր, մենք սկսեցինք անգրագիտության վերացման դործնական աշխատանքը։

Մեզ մոտ կուբանում դարունն սկսվում եղաս վաղ, իսկ աշունը — ուշ։ Անգրագիտության վերացման աշխատանքներն սկսվում են սովորաբար հոկտեմբերի 2-րդ կեսից։ Մեր ստանիցայում մեզ հաջողվում եր ամեն տարի հոկտեմբեր ամսի առաջին որերից սկսել աշխատանքները։

Աշուն ե... մերթընդերթ անձրւներ են գալիս... Հացերն արդեն հավաքած են: Սկսվել ե աշնավարը և աշնացանը: Շատերն արդեն այդ աշխատանքներն ել են վերջացրել. իսկ կանայք բոլորովին ազատ են դաշտային աշխատանքներից. Այդ ժամանակ ահա անգրագիտություն վերաց նողները — կԱնԲ. անդամները, սկսում են տնից-տուն շրջել, բաղխել դռները և անգրագետներին հավաքել լիկլայաններում:

Մեզ մոտ գործն սկզբից ևեթ հաջող գնաց: Անգրագետները, նամանավանդ կանալք, հաճույքով ելին գնում լիկլայաններ: Ճիշտ ե, լինում ելին դեպքեր, յերբ անգրագետների ամուսինները և ծնողները խոչընդոտ ելին հանդիսանում նրանց, բայց մենք այդ ժամանակ բոլորս շրջում ելինք ամբողջ ստանիցայում և բոլոր ժողովներում ու նիստերում համոզում ելինք բնակչությանը՝ անգրագետներին ուղարկել լիկլայաններ: Այսպես ամեն տարի մենք սկըսում ելինք անգրագիտության վերացման աշխատանքները և դա համարյա լիովին, կազմակերպչական տեսակետից, կատարվում եր մեր բջիջի ուժերով:

Սկզբում դեռ չելինք կարողացել ինչպես հարկն ե, ծավալել մեր աշխատանքը, սակայն հետագայում մենք թափահարեցինք անգրագետ մաս-

սան շատ ուժեղ կերպով։ Լիկլալանները լեփ-լեցուն ելին։ Լիկլայանների քանակը մեր ստանիցայում մի ժամանակ համառում եր 16-ի, վորոնցից 10—12 լիկլայան պահում եյին մեր ըջիջի միջոցներով։ Հաճախում ելին կանոնավոր։ Կանանց համար լիկլայաններում մտցրինք կարի և ձեի ժամ։

Մեր կին ակտիվիստ-ուսուցչուհիները շատ չնշին վարձատրությամբ սովորեցնում ելին ձեռագործ։ Ստանիցայի խորհուրդը մեզ տվեց մի կարի մեքենա։ Կանալք կտօրներ ելին բերում, և աշխատանքն ընթանում եր շատ աշխուժ։ Դրվագը և նկարագրել այն ուրախ տրամադրությունը, վոր տեղի յեր ունենում սովորաբար ձեռագործի դասերին։ Այնտեղ յերգում եյին, ծիծաղում ելին, բայց աշխատանքն ընթանում եր խելացի կերպով և լրջորեն։

Ձեռագործի ալդ դասերը մեծ դեր խաղացին կանանց լիկլայանները քաշելու գործում։ Սովորող աղամարդկանց համար կազմակերպված եյին դրամատիկական և յերգեցիկ խմբակներ, իսկ անչափահասների համար՝ շարժուն խաղեր։ Ընդմիջումներին սովորողները, կոփմերի և հայ-հայանքների փոխարեն, յերգում ելին, պարում, խաղեր կազմակերպում։

Ամեն յերեկո բոլոր լիկլայանները հաճա-

խում եր մեր ակտիվը (2—3 հոգով միասին): Անտեղ մենք ծանոթանում եյինք սովորողների աշխատանքների հետ, իմանում ելինք՝ ինչպես ելին հաճախում, տեղեկություններ ելինք առնում չհաճախողների մասին, վորպեսզի, տներում խոսենք այդպիսիների հետ։ Անզրագիտությունը վերացնողները թուլատրում ելին մեզնաև ստուգել սովորողների գիտցածը։ Ավելի լավ սովորողներին և կանոնավոր հաճախողներին հենց այնտեղ—լիկայանում վորոշ նվերներ ելինք տալիս տետրեր, մատիտներ, ծխախոտ, վերնաշապիկ կամ շալվարի կտորներ և ալին։ Բատրակ Պ. Սիմոնովին, որինակ, նվիրեցինք շալվար և վուտնամանի կաշի։ Այս նվերներն առաջ բերին մեծ մրցակցություն։ Լինում եյին և վեճեր այս կամ այն սովորողին նվերներ տալու առթիվ։ Այսպիսի դեպքերում մենք կամ քվեարկում եյինք, թե ում տանք, կամ տալիս եյինք յերկուսին ել, վորոնց մասին խոսք եր լինում։ Մեր բջիջի բյուրոյի նիստերին մենք լսում ելինք անզրագիտություն վերացնողների զեկուցումները և տալիս ելինք նրանց մեր ընկերական ցուցմունքները։ Մեր բջիջի և տարվա աշխատանքների ընթացքում վոչ մի վեճ մեր բյուրոյի, անզրագիտության վերացնողների և խրճիթ-ընթերցարանների միջև չի յեղել։ Չի յեղել նաև նրանց միջև աշխա-

տանքները բաժանելու խառնաշփոթություն։ Յուրաքանչյուր կազմակերպություն իմացել ե իր տեղը անդրադիտության վերացման աշխատանքներում։

Հակառակ լիկեայաններում սովորելու համար սահմանված 3—4 ամսվա ժամկետին, մենք մեղ վրա ելինք վերցնում լրացուցիչ ծախքերը, և լիկեայանները մեղ մոտ աշխատում եյին 4—5 և ավելի ամիսներ։ Մենք դա անում եյինք նրա համար, զորպեսզի մարդիկ մի ժամանակից հետո նորից անդրագետ չդառնալին, այսինքն՝ տեղի չունենար ոեցիդիվ։ Հետազալում համոզվեցինք, զոր մենք ճիշտ ենք վարվել։ Ոեցիդիվը մեղ մոտ շատ չնշին եր։

Լիկեայաններում աշխատանքները վերջացնելուց հետո մենք ամեն տարի կազմակերպում եյինք ուսումնական շրջանի հանդիսավոր ավարտում։

Ավարտման յերեկոյից շատ առաջ, մենք պատրաստվում ելինք դրա համար, պատրաստում եյին պիես, համերդ, նվերներ լիկեայանն ավարտողների համար և այլն։ Վերջապես գալիս եք հանդիսավոր որը։ Ստանիցալում փակցվում եյին մեծ ագիշաները յերեկոյի մասին։ Հրավիրվում եյին հյուրեր։

Յերեկոն ե... Փողտանը իրարանցում ե տի-

ըում: Հասարակությունը լցվում է դահլիճը: Առաջին նստարանները գրավում են անդրագիտություն վերացնողները և ԿԱՆԸ ծեր-անդամները: ԿԱՆԸ մեր բջիջի նախագահը բացում է հանդիսավոր ժողովը: Նվագում են «Իստերնացիոնալ»: Սկսվում են տեղական կազմակերպությունների ներկայացուցիչների վողջույնի խոսքերը: Հետո կարդացվում է լիկայաններն ավարտողների ցուցակը, և նրանց արտեղ ևեթարվում են վկայականներ: Մեր բջիջի ներկայացուցիչները բաժանում են նվերներ: Կանչում են՝ «Դուդանովա Աննա, ստացեք կարմիր գըրքուկ՝ լավ սովորելու համար», «Կարմիր-բանակայինի այրի իլլուզկա Ուլյանա, ստացեք 7 ֆ. նավթ՝ նրա համար, վոր վոչ մի անգամ չեք բացակայել. սրանից հետո յերեկոները տանը աշխատեցեք», «Զնամենսկայա Մարիա, ստացեք գուլպաներ» «Արտեմյե Յեֆիմ, ստացեք ծխախոտներ» և այլն: Այստեղ նվերներ ենին տրվում նաև լավ ուսուցիչ-լիկվիդատորներին: Վերջապես՝ նվերների բաժանումը վերջանում է, և սկսվում է սովորողների ուժերով կազմակերպված փոքրիկ պիեսի ներկայացումը, իսկ հետո յերդվում են միքանի յերգ: Այսպես ենին անցնում մեր ավարտական յերեկոները: Այսպիսի յերեկոներ մենք կազմակերպում ենինք նաև անդրագի-

տութլան վերացման մասին դեկրետ հրատարակելու որը—ամեն տարվա դեկտեմբերի 26-ին:

1926 թ. աշնան սկզբներին անդրագիտությունը մեր ստանիցայում բավականին պակասեց: Անդրագիտներին լիկիալաններ հավաքելը բավականին դժվարացավ: Այդ պատճառով մենք ստիպված էիղանք զբաղվել անհատական խմբակային ուսուցման ձեվի լայն կիրառման խնդրի մշակումով: Հիմնովին ուսումնասիրելով այդ հարցը, մենք 1926/27 ուս. տարվա սկզբից անցկացրիմ մեր անդրագիտության վերացման դորձնական աշխատանքներում անհատական խմբակային ուսուցման ձեզ: Այդ ուսումնական տարրում մենք այդ, մեղ համար նոր, ձևով սովորեցրինք 273 մարդ:

1927/28 ուսումնական տարրում անդրագիտությունը մեզ մոտ անչափ եր վերացված, վորխմբակներ կազմելը նույնիսկ դարձավ համարյա թե անհնարին: Այն ժամանակ, մի լավ աշխատելուց հետո, մենք վորոշեցինք մնացած անդրագիտներին լրիվ չափով ընդգրկել ընտանեկան ուսուցման մեթոդով, վորը և կատարեցինք:

Անհատների աշխատանքները դեկավարելու համար մենք ունեցինք 2 վարձու հրահանգիչներ, վորոնք շրջում ենին տները, ուր պարապում ենին անհատները, ստուգում և ուղղություն ենին տալիս նրանց աշխատանքներին:

Զորս տարվա մեր աշխատանքի արդյունք-ները ցույց են տալիս հետեւալ տվյալները մեր լիկայաններում սովորողների թվի մասին.—

Տարիք	Ստանիցայի խորհրդի միջոցներով	ԿԱՆՀ-ն մեր ըջիչի միջոցներով	Ընդամենը
1923-24	—	65	65
1924-25	197	106	303
1925-26	161	105	266
1926-27	108	—	108

Անհատական-խմբակալին ձեռվ սովորեց-ված ե՝

Տարիք	Ստանիցայի խորհրդի միջոցներով	ՏԱՆՀ-ն մեր ըջիչի միջոց- ներով և ուժ	Ընդամենը
1925-26	—	75	15
1926-27	—	273	273

Ամբողջ ժամանակվա ընթացքում սովորող-ներից՝ թե ստանիցալի խորհրդի և թե մեր լիկ-կայաններում, նախազինակոչիկներ՝ 1901—1906 թ. թ. ծնվածներ՝ յեղել են 59 հոգի, բատրակ-ներ 2 սեռից—61 հոգի, իսկ մասցածները յեղել են գլխավորապես միջակ և չքավոր բնակչու-թյունից։

9. ՊԱՅՔԱՐ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՌԵՑԻԴԻՎԻ
(ՎԵՐԱԴԱՐՁԻ) ԴԵՍ

Վերեսում արդեն ասվեց, թե լիկկալանները մեղ մոտ աշխատում եյին սահմանված ժամանակից ավելի, վորի պատճառով ոեցիդիվի լեռ-կլուղը մեղ մոտ զարհուրելի չեր. Սակայն մեղ մոտ ոեցիդիվ կար. Այդ ոեցիդիվի դեմ պալարը մենք մղում ելինք միքանի միջոցներով. Խրճիթ-ընթերցարանին կից մեր կարմիր անկյունում մենք ունեյինք կիսազրագետների համար փոք-րիկ զրադարան՝ 300—600 զրքերով. Յերբ լիկ-կայաններում պարապող անզրադետները վեր-ջացնում եյին ալբուրենական մասը, մենք նրանց տալիս ելինք զրադարանից զրքուկներ. Գրքերը զրադարաններից գուրս ելին տալիս մեր ակտիվ ընկերներից, իսկ յերբեմն այդ աշխատանքին ելին կոչվում սկզբներում լիկկալան ավարտած ուժեղ ընկերներ:

Լիկկայաններն արձակելուց հետո, վորը կա-տարում ելինք զարնան սկզբին, մենք պայմա-նավորվում ելինք սվարտողների հետ, վորպեսզի նրանք իրենց կապը չկտրեն գրադիտության և մեղ հետ. Յուրաքանչյուրին առաջարկվում եր զրքեր վերցնել մեր զրադարանից և խրճիթ-ըն-թերցարանից. Մեր զրադարանից կիսազրագետ-ներին զրքեր տալիս նրանց տալիս ելինք նաև

մաքուր թղթի կտորներ, վորպեսզի նրանք կարողանան իրենց կարծիքը գրել կարդացած գրքի մասին կամ արտազրեն իրենց հետաքրքրող տեղերը։ Այս ճանապարհով մենք պայքար ելինք մղում վոչ միայն անզրագիտության ռեցիդիվի դեմ, այլև գրելը մոռանալու ռեցիդիվի դեմ։ Կիսազրագետ ընթերցողների մոտավորապես 90 տոկոսն այդ կատարում եյին և բերում իրենց զրածները ցուց տալիս մեր գրադարանապետներին։ Գրադարանապետներն ել, լիթե նրանք լավ գրագետներ ելին, նայում ելին զրածները և ցուց տալիս նրանց սխալները։

1927թ. աշնանից մենք սկսեցինք, մեր բջիջի ակտիվի միջոցով, զրքեր տանել նրանց տները, վորոնք առաջներում սովորել եյին լիկ-կայաններում։ Կարելի յեւ ասելի վոր այդ ձեւի աշխատանքն անզրագիտության ռեցիդիվի դեմ պայքար մղելու գործում իրեն միանգամայն կարդարացնի։

Պետք եւ ասած, վոր ամեն ընտանիքի տված գիրքը կարդացվում եւ կոլեկտիվորեն, ամբողջ ընտանիքով, վորը խոշոր նշանակություն ունի, վորովհետև մեր խրճիթ-ընթերցարաններն իրենց գրքերով դեռ ամեն մի ռանչպարի խրճիթ չեն մտել։ Բացի այդ, այդ աշխատանքը վոչ միայն խորթ չի կԱնը խնդիրներին, այլև ընդհակա-

ուակը, ամենապետքական ողակներից մեկն եմեր կուլտուր-կրթական աշխատանքների մեջ:

Մեր բջիջի կողմից լիկայաններ ավարտողներից կազմակերպված դրամատիկական և չերգեցիկ խմբերի ղեկավարներին հանձնարարվում եր ստիճանի խմբակի անդամներին արտադրել իրենց գերերը, վոտանավորներ, յերգեր և այլն, վորը գարձալ մի միջոց եր՝ պալքարելու անդրագիտության ռեցիդիվի դեմ:

Ամեն տարի մեր բջիջը բացում եր ամառային կերակնորյա կիսադրապետների դպրոցներ։ Զի կարելի ասել, վոր նրանք մեծ արդյունք ենին տալիս, բայց այդ ձեմ աշխատանքը ծառայում եր վորապես մի միջոց կիսադրապետներին խըրճիթ-ընթերցարանի և մեզ հետ կապվելու համար, և այդ աշխատանքները տարվում ենին խօճիթ-ընթերցարանում։

Անդրագիտության ռեցիդիվի դեմ պալքարմղելու աշխատանքի այս ձևերից հրաժարվել վոչ մի դեպքում չի կարելի։

Անդրագիտության ռեցիդիվի դեմ պալքարմղելու բոլոր վերոհիշյալ ձևերից բացի, մեր ստանիցալում տարեցտարի, ինչպես ստանիցալի խորհրդի միջոցներով, նույնպես և ԿԱՆՔ սեր բջիջի միջոցներով, աշխատում ենին նաև կիսադրա-

գետների ձմեռային դպրոցներ։ Զորս տարվա ընթացքում այդպիսի դպրոցներ վերջացրել են հետևյալ թվով կիսազրագետներ։ —

Տարիք	Ստանիցայի խորհրդի դպրոցներում	ԿԱՆՔ-Ն մեր դպրոցներում	Ընդամենը
1923-24	—	70	70
1924-25	74	—	74
1925-26	—	67	67
1926-27	—	49	49
Ընդամենը	74	186	260

Լիկայաններ ավարտածներին հասարակական-կուլտուրական աշխատանքներին կապելու տեսակետից մենք հետևյալին ենք հասել。 —

Ընդունվել են կուսակցության մեջ . 3 հոգի,

» » կոմիերիտմիության » . 16 »

Ընտրվել են ստանիցայի խորհրդի մեջ 5 »

» » կին-պատգամավորուհիներ 73 »

Ընդունվել են կամավոր ընկերությունների մեջ 115 »

Դարձել են գրադարանի և խրճիթ-ընթերցանի բաժանորդ 72 »

Վերջին 2 տարվա ընթացքում ստանիցայում անգրադիտության ռեցիդիվի դեմ պարզաբն

ա թբողջովին տարվում եր մեր բջիջի կողմից,
վորովհետեւ ստանիցալի խորհրդին այդ նպատա-
կի համար նախահաշվով դումար չեր բաց թող-
նըլում:

10. ԲԶԻՉԻ ՀԵՏԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳԻՐԸ

Վորովհետեւ մենք մեղ նպատակ ենք դրել
ինչ ել լինի ստանիցալում անգրագիտությունը
վերացնել մինչև Հոկտեմբերյան հեղափոխության
10-րդ տարեդարձը, բնական ե, վոր բջիջի բո-
լոր ուժերը լծված եյին անգրագիտության վե-
րացման անմիջական աշխատանքներին:

Զգալի չափով լուծելով դրված խնդիրները,
1927 թ. աշնանից մեր բջիջը, շարունակելով
անգրագիտության վերացման աշխատանքները
համարել հիմնական, սկսեց մոտենալ նաև ԿԱՆՀ
նոր նպատակների իրականացման աշխատանք-
ներին (ինքնակրթություն, աջակցություն ընդհա-
նուր սկզբնական ուսուցման): Մասնավորապես,
բջիջը, իրեն ակտիվի միջոցով, մասնակցեց դըպ-
րոցական հասակ ունեցող լերեխաների ցուցա-
կագրմանը, վորի արդյունքները կողտագործ-
վեն մեր ստանիցալում շուտափութ կերպով

ընդհանուր սկզբնական ուսուցում անցկացնելու
համար:

Ինքնակրթության գործին աջակցություն
ցույց տալու խնդրում մեր աշխատանքներն ա-
գիտացիալից, դպրոցներ և կիսադրագետների
խմբակներ կազմակերպելուց այն կողմը չեն
անցել:

**Մեր հետագա աշխատանքների ծրագիրը հե-
տեյալն ե.** —

1. Վերջնականապես վերացնել անգրագի-
տությունը մեր ստանիցալի ամբողջ բնակչու-
թյան մեջ:

2. Շարունակել խմբակների և կիսադրագետ-
ների դպրոցների կազմակերպումը:

3. Զգտել՝ բանալ տալու 1927 թ. փակված
մեծահասակների բարձր տիպի դպրոցը, կամ բա-
նալ տալ մեծահասակների գլուղացիական դաս-
ընթացքներ:


4. Նյութապես մասնակցել աղքատ դպրո-
ցականներին, չքավորների յերեխաներին և բատ-
րակությանը վունամաններ ու զգեստ մատակա-
րարելու գործին:


5. **Մրցանակ ստացած կինո-ասլաղարատը**

խելացի կերպով ոգտագործել ինչպես մեր ստանիցաւմ, նույնպես և հարեան մարդաշատ վայրերում:


6. Ամեն տեսակի աջակցություն ցույց տալ ստանիցալի խորհրդի և սոցդասին աջակցող կոմիտեների կուլտ-սեկցիաներին:

7. Մասնակցել 15-րդ կուսամագումարի վորոշումներն իրականացնելու բոլոր ձեռնարկումներին, վորոնք վերաբերում են գյուղի կուլտուրական հեղափոխությանը:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039015

[114]

A 3906

ՊԱՏՎԵՐՆԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼ

Յերևան, Կենտրոն ՀՀ պատմական գրադարան
«Կորչի անգրագիտությունը» լնկերության Կենտ. Խորհրդին:
Յերևան, ՊԵՏՀՐԱՑ

ЗАКАЗЫ НАПРАВЛЯТЬ:

Эревань, ЦИК, Цент. Совету ОДН

Эревань, ГОСИЗДАТ.